այլ զպատճառս. առաջին պատճառ, որ ոչ եմ ընիկ ի յերկրէս, և ոչ գիտեմ զլեզու սոցունց, այլ որպէս համր կենամ. երկրորդ, ի մէջ զարիպութեան ոչ ունիմ ծանօթ և օգնիչ և կամ մխիթարիչ. բայց միայն ունիմ զարարիչն իմ Աստուած. երրորդ, ունիմ զծերութիւն, որ և մերձ եմ ի մահ. չորրորդ պակասաւոր եմ, ունիմ զաղքատութիւն հոգով և մարմնով. հինգերորդ, որ աչքս ոչ ունի պարզ և յիստակ տեսութիւն, զի սակաւ տեսանէ վասն ի ծերութենէ. վեցերորդ, որ կայ ի վերայ իմ մեծամեծ քան զչափս աւելի սուգ և տրտմութիւն. վասն այնորիկ եթէ հասեալ է որ մահուս, և անկարծ մեռանիմ ի յերկիր օտարաց. ոչ կայ գերեզմանատեղ Հայոց ազգիս. տա՞ բեալ ինձուցանեն ի խոր վիրապ մի, և լինիմ մարմնակորուստ։ Ահա այս՞ քան սակաւօք ճառեցի զորպիսութիւն մեր. անմեղադիր լերուք վասն իմ մեղուցելոյս։ Եթէ ի միջի սաղմոսարանիս սղալութիւն գտցի, այն ոչ է ի կամաց, այլ ի մոռացմանէ և կամ կասկածանաց սրտի մերում եղեալ էր։ Վասն որոյ խնդրեմ առ ձեզ, ո՛վ հանդիպողք գրոցս, հայրք և եղբայրք, նե՞ րել և զպակասն լնուլ և զաւելորդն յապաւել, որք թէ հմուտ էք արուեստի և մակացութեան, և զմեզ պահել անմեղադրելի։ Ողջ լերուք ի Տէր. ամէն. եղիցի։ — Կատարեցաւ Երգարանս ի թվին Հայոց ՌՃԻԲ, ի դեկտեմբե՞ րի ամսոյ ի օրն հնկետասան. ցիսուսի Քրիստոսի մարդացելոյն փառք և պա՞ տիւ յաւիտեանս. ամէն։

Ո՛վ ընթերցողք սուրբ Սաղմոսիս
Եւ հանդիպողք այսըմ գըրիս,
Հայր մեղայ մի խնդրէ Գրիգոր գերիս
Եւ բաղմամեղ ողորմելիս.
Վարձըս տայ ձեզ յայնմ յաւիտենին,
Ցորժամ ասէ. Ցարի՛ք առ իս։..
Զեռըս փըտի ի հող դառնայ,
Գիրս յիշատակ առ ձեզ մընայ։

Ի Թվին Հայոց ՌՀ ամի սամառնացաւ (?) ծովն բովանդակ, մինչեւ գնաց հասաւ ի ովկիանոսի մեծ ծովն, փետրվար ամսոյն մէկէն մինչեւ ի մարտի ամիսն. վասն գիտութեան լինելոյ՝ զպաղն ծակեցին և առին զչափն, որ և իրեք կանգուն և կէս էր թանձրութիւն պաղին։ Սով եղաւ Ըստամպոլ. 25 դրամ հացն՝ մէկ ստակ, այն այլ հող և մոխիր էր։

Թուականութիւն Թուրքաց ժամանակաց (յառմանէ Կ. Պոլսի՝ մինչ իր ժա՞ մանակն)։... Ցետ այնորիկ (Իպրահիմի) նստաւ Իպրահիմի որդի Գ Մահմատ անուն, որ էր Հայոց Թվին ՌՂԷ. որ եկաւ առաւ զԳամենից, և այժմ հա՞ կառակութեամբ պատերազմի ընդդէմ Լեհաց երկրի։ Վերջ։ [Սաղմոս ի Մո՞ նագոյ Պաշիերայ [1]]։

1. Գրած է և ստանաւոր գովեստ Սաղմոսաց, յորում գրէ զինքն « Ոսկերիչ Գրիգոր Ըստամպոլցի »։